

ՀՐԱՆՏ

ISBN 978-9939-1-1697-6

Քննագրի վերնագիրը՝

Իրան

Հեղինակ՝

Թուրա Չանդար

Թուրքերենից թարգմանեց

Նարինե Թադևոսյանը

Թարգմանության խմբագրումը և սրբագրումը՝

Անժելա Ավագյանի

Արմենուհի Նիկողոսյանի

Ալին Օզինյանի

Կազմի դիզայներ՝

Ուրբու Լոմբոլի

Կազմի լուսանկարը՝

Մեթաթի Քարաբուրթի

Էջադրող՝

Մելին Հանգաօղլու Ուլունք

Տպագրված է

«Անտենոր»-ում

Երևան, հուլիս, 2023



HDV
PUBLICATIONS

© Հրանտ Դինք հիմնարկ հրատարակչություն

info@hrantdink.org

www.hrantdink.org

Գիրքը հրատարակվել է Եվրոպայի միջազգային զարգացման գործակալության (Sida) և Ուլոֆ Պալմե միջազգային կենտրոնի աջակցությամբ: Գրքի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես Հրանտ Դինք հիմնարկը: Գրքում տեղ գտած մտքերը չեն արտահայտում Եվրոպայի միջազգային զարգացման գործակալության և Ուլոֆ Պալմե միջազգային կենտրոնի պաշտոնական տեսակետները:

ՀՐԱՆՏ
Թուրքա Չանդար

Հրատարակչի կողմից

Գրքի գրուխների համառոտ բնութագրերի հեղինակն է գրող Նագար Բյույունը:

Հրատարակության մեջ պահպանվել են բոլոր բառերը, որոնք բնագրում հանդիպում են արևմտահայերենին հատուկ հնչողությամբ, տեքստում առանձնացվելով շեղատառ գրությամբ՝ պահպանվել է նաև դրանց գրելաձևը: Այս մոտեցմամբ փորձ է արվել թարգմանության մեջ արտացոլել բնագրի լեզվամշակութային նրբերանգները:

Ռաբերի...

ԹՈՒԲԱ (ԹԱՐՁԱՆ) ՉԱՆԴԱՐ

Ծնվել է 1948 թվականին Ստամբուլում: Միջնակարգ կրթություն է ստացել Ավստրիական լիցեյում, այնուհետև՝ ԱՄՆ-ում: Ուսանել է Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնում: Մարտի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո բնակություն է հաստատել է Գերմանիայում: Թուրքիա վերադառնալուց հետո դեկավարել է «Cumhuriyet»¹ թերթին կից թողարկվող «Bizim Almanca»² անսագրի հրատարակման աշխատանքները: Եղել է «Gergedan»³ անսագրի խմբագիրը: Ահմեդ Ջենալի հետ թարգմանել ու հրատարակման է պատրաստել Միխայիլ Գորբաչովի «Հրապարակայնություն»⁴ աշխատությունը: Դրան հաջորդել է դարձյալ «Dönemli Yayıncılık»⁵ հրատարակչության լույս ընծայած՝ Անդրեյ Տարկովսկու «Չոհաբերություն»⁶-ը: «Yeni Yüzyıl»⁷ թերթում հեղինակել է արվեստին, նշակույթին ու զբոսաշրջությանը նվիրված հոդվածներ, իսկ «Gazete Pazar»⁸-ում՝ «Դիմանկարներ» խորագրով սյունակ է վարել: Մուսլլա Էյուբօղլու Անհեզգերի կյանքը պատմող առաջին գիրքը՝ «Հիփիսական արևը», լույս է տեսել 2003 թվականին, իսկ «Մուրադ Բեյգև. մի կյանք» վերնագրով գիրքը՝ 2007 թվականին:

1 «Չումհուրիյեթ», հայերեն բառացի՝ հանրապետություն (ծնր.՝ թարգմանչի):

2 «Բիզիմ Ալմանցա», հայերեն բառացի՝ մեր գերմաներենը (ծնր.՝ թարգմանչի):

3 «Գերգեդան», հայերեն բառացի՝ նզգեղջյուր (ծնր.՝ թարգմանչի):

4 Խոսքը Միխայիլ Գորբաչովի «Гласность» (թուրք.՝ «Glasnost») աշխատության մասին է (ծնր.՝ թարգմանչի):

5 «Դյոնեմլի Յայունլիկը», հայերեն բառացի՝ պարբերական հրատարակչություն (ծնր.՝ թարգմանչի):

6 Խոսքը Անդրեյ Տարկովսկու «Жертвоприношение» (թուրք.՝ «Kurban») երկի մասին է (ծնր.՝ թարգմանչի):

7 «Յենի Յուզլըլ», հայերեն բառացի՝ նոր հարյուրամյակ (ծնր.՝ թարգմանչի):

8 «Գագերե Փագար», հայերեն բառացի՝ Կիրակի» թերթ (ծնր.՝ թարգմանչի):

ԹՈՒԲԱ (ԹԱՐՉԱՆ) ՉԱՆԴԱՐ

Ծնվել է 1948 թվականին Ստամբուլում: Միջնակարգ կրթություն է ստացել Ավստրիական լիցեյում, այնուհետև՝ ԱՄՆ-ում: Ուսանել է Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնում: Մարտի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո բնակություն է հաստատել է Գերմանիայում: Թուրքիա վերադառնալուց հետո դեկավարել է «Cumhuriyet»¹ թերթին կից թողարկվող «Bizim Almanca»² անսագրի հրատարակման աշխատանքները: Եղել է «Gergedan»³ անսագրի խմբագիրը: Ահմեդ Ջենալի հետ թարգմանել ու հրատարակման է պատրաստել Միխայիլ Գորբաչովի «Հրապարակայնություն»⁴ աշխատությունը: Դրան հաջորդել է դարձյալ «Dönemli Yayıncılık»⁵ հրատարակչության լույս ընծայած՝ Անդրեյ Տարկովսկու «Չոհաբերություն»⁶-ը: «Yeni Yüzyıl»⁷ թերթում հեղինակել է արվեստին, նշակույթին ու զբոսաշրջությանը նվիրված հոդվածներ, իսկ «Gazete Pazar»⁸-ում՝ «Դիմանկարներ» խորագրով սյունակ է վարել: Մուսլլա Էյուբօղլու Անհեզգերի կյանքը պատմող առաջին գիրքը՝ «Հիփիսական արևը», լույս է տեսել 2003 թվականին, իսկ «Մուրադ Բեյգև. մի կյանք» վերնագրով գիրքը՝ 2007 թվականին:

1 «Չումհուրիյեթ», հայերեն բառացի՝ հանրապետություն (ծնր.՝ թարգմանչի):

2 «Բիզիմ Ալմանցա», հայերեն բառացի՝ մեր գերմաներենը (ծնր.՝ թարգմանչի):

3 «Գերգեդան», հայերեն բառացի՝ նզգեղջյուր (ծնր.՝ թարգմանչի):

4 Խոսքը Միխայիլ Գորբաչովի «Гласность» (թուրք.՝ «Glasnost») աշխատության մասին է (ծնր.՝ թարգմանչի):

5 «Դ-յունեմլի Յայունցլլըք», հայերեն բառացի՝ պարբերական հրատարակչություն (ծնր.՝ թարգմանչի):

6 Խոսքը Անդրեյ Տարկովսկու «Жертвоприношение» (թուրք.՝ «Kurban») երկի մասին է (ծնր.՝ թարգմանչի):

7 «Յենի Յուցլլը», հայերեն բառացի՝ նոր հարյուրամյակ (ծնր.՝ թարգմանչի):

8 «Գագերե Փագար», հայերեն բառացի՝ Կիրակի» թերթ (ծնր.՝ թարգմանչի):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրքի մասին...	9
Ռաքելի նամակը	17
Իմ Հրանտը	19

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ. ԽԵՆԹ ՀՐԱՆՏ	21
ՄԱՅԹ...	23
ԲԱՐՁՐԱՅՆԵՆՔ...	39

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ԱՆՏԵՐ ԵՐԵԽԱ	41
1. Գյավուրի բաղնիք	47
2. Ձկնորսական գամբյուղը	61
3. Մանկատուն	69
4. Ատլանտիդայի քաղաքակրթություն	85

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ԽԵՆԹ ՈՒ ԽԵԼԱՌ	95
5. Սրտակեր	99
6. Դպրեվանքի ոգին	115
7. Առաջին ըմբոստություն	127
8. Հրանտից մինչև Ֆլորաք	135

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. ՀԱՎԵՐԺ ՍԵՐ	147
9. «Հե՛յ, Ռաքել»	151
10. Չուքաքն ու Թաշնաքը	169
11. Նրանք հասան իրենց մուրագին	181

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ. ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒՎ	193
12. Կոլեկտիվ աշխատանք	195

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ԸՆԴԴԻՄԱԴԻՐ	209
13. Ծիծեռնակի բույնը	211
14. Բանտի թյուրքյուն	227

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ.	
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՉՈՐԱՆՈՑ	241
15. Տարօրինակ համալսարանականը	243
16. Կասկածելի տարրերի վաշտը	253

ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ. «BEYAZ ADAM»	263
17. Գործարար Ֆըրաթ Դինքը	267
18. Բախտախաղի սիրահարը	287
ՄԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ. ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ	301
19. Երկնքից երեք խնձոր ընկավ...	303
20. Դինք եղբայրները	337
ՄԱՍ ԻՆՆԵՐՈՐԴ. ՎԵՐՉԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ	357
21. Դերձակ Հաշիմի վարդը	359
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ. ԲԱՐՈՆ ՀՐԱՆՏ	377
ՆԱԽԱԲԱՆ	379
ՄԱՍ ՏԱՄՆԵՐՈՐԴ. ՆԱՅԵԼ	385
22. Բարոն Հրանտի «Ակօս»-ը	387
23. «Ակօս»-ի ոսպնյակից	425
24. «Ակօս» կոչվող աշխարհը	459
ՄԱՍ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ. ԳԻՊՉԵԼ	499
25. Թուրքիայում մի հայ	501
26. Հայկական աշխարհում մի թուրքիացի	535
ՄԱՍ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. ՏԵՄՆԵԼ	569
27. Հայկական աշխարհի ծանծաղ ավերը	575
28. Թուրքիայի խոր ջրերը	591
ՄԱՍ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ. ԻՄԱՆԱԼ	611
29. Վերջի սկիզբը	613
30. Հետապնդում և որս	637
31. Աղավնային վեներտություն	669
ՄԱՍ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ. ՄԵՌՆԵԼ	699
32. Հիմա սաղմոսի ժամանակն է	701
33. Վերջին հանդիպում	709
Ալբոմ	711
Ով ով է	745
Աղբյուրներ	751
Անվանացանկ	759

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ...

Այս գիրքը առաջինն է իր տեսակի մեջ... Հրանտ Դինքի մասին առաջին կենսագրական գիրքն է, բայց գիտեմ, որ վերջինը չի լինելու: Հրանտի կյանքի և թողած ժառանգության մասին դեռ շատ է գրվելու: Մա իմանալը թեկուզ մի փոքր մեղմացնում է «առաջին»-ը լինելու հուզմունքը:

Այս գիրքը դասական կենսագրական աշխատանք չէ: Մա հերոսի հետ նույնանալով՝ «առաջին ձեռքից» տեղեկություններ հաղորդող «աստվածային» պատմիչի կողմից ներկայացվող «կյանքի պատմություն» չէ, որպիսիք գրի են առնվում մի ամբողջ կյանք ուսումնասիրելուց, հատորներով հուշագրություններ, հետազոտություններ ու վերլուծություններ կարդալուց, օրագրեր, նամակներ ու ամեն տեսակ գրանցումներ մանրամասն ուսումնասիրելուց հետո: Եվ այդպիսին չլինելն էլ գիտակցված ընտրություն է...

Այդ ընտրությունը պարտադրող գլխավոր պատճառը Հրանտի մահն է: Հրանտ Դինքը թուրքիացի⁹ հայ մտավորական էր: Նա սպանվեց 2007 թվականի հունվարի 19-ին՝ ամբողջ Թուրքիայի աչքի առաջ, իր հայացքների պատճառով: Սկզբում ցանկանում էին նրան իր երկրից քշել: «Կա՛մ սիրիր, կա՛մ հեռացիր», - ասում էին: Իսկ նա գրում էր. «Ես ինձ զգում եմ ինչպես անհանգիստ աղավնի, բայց գիտեմ նաև, որ այս երկրում մարդիկ չեն վնասում աղավնիներին»: Մակայն այդ տողերի թանաքը դեռ չէր չորացել, երբ թիկունքից զարկեցին նրան:

9 Թուրքիայի բնակիչ (թուրք.՝ Türkiyeli), 90-ականների կեսերին ձևավորված եզրույթ, որ ինքնությունը ներկայացնում է ոչ թե ըստ էթնիկ պատկանելության, այլ ըստ բնակության երկրի: Այս եզրույթի շուրջ քննարկումները դեռ շարունակվում են (ծնթ.՝ թարգմանչի):

Այդ ամենի հարուցած սարսափը, ցավն ու անոթը այս երկրում վերապրել է խիղճ ունեցող յուրաքանչյուր ոք: Նրա կորուստը դեռ շատ թարմ է, դադում է մեր հոգին: Հնարավոր չէր Հրանտից վերացարկվել ու կողմնակի հայացքով նայել ու գրել ողբերգական ավարտով նրա կյանքի մասին... Ուստի հենց սկզբից էլ պարզ էր, որ այս գիրքը դասական իմաստով չի կարող կենսագրական գիրք լինել:

Գալով նրա կյանքին... Հրանտ Դինքը արխիվացման սիրահար չէր: Որպես իր շատ սիրելի երկրի բնորոշ ներկայացուցիչ՝ նա իր կյանքն ապրել էր առանց կարևորություն տալու իր անձնականին վերաբերող փաստերը հավաքելուն, պահելուն և պահպանելուն: Գուցե ավելի ճիշտ է ասել՝ կարևորություն տալու հնարավորություն չէր ունեցել, որովհետև իր կյանքի մեծ մասը՝ դեռ սկզբից, անցել էր հացի խնդիր լուծելու հոգսերով, գոյության համար մղվող բուռն պայքարով: Այդ ժամանակներից պահպանված արխիվային նյութերը սահմանափակվում են կնոջն ուղղված մի քանի բանաստեղծությամբ և երեխաներին ուղղված մի քանի նամակով:

Բայց մյուս կողմից՝ Հրանտ Դինքը, այնուամենայնիվ, որոշակի արխիվ ստեղծել էր: Նրա արխիվը վերաբերում էր ժողովրդական բանասիրատությանը:

Իր հայրենի եզերքների ոգուն հավատարիմ՝ նա տարիներ շարունակ հավաքել էր իրեն պատմված ամեն ինչ: Այդ ամենը միավորել էր սեփական գեներտիկ կողերում ամրագրված տեղեկությունների հետ, համադրել սեփական փորձին ու դարձել «հարյուր տարվա հայ»:

Ավելին՝ իր կյանքի վերջին տասը տարում, որոնք ապրել էր՝ չիմանալով, որ դրանք պիտի անջնջելի հետք թողնեն մեր երկրի նորագույն պատմության, ներկայի և անգամ մերձավոր ապագայի վրա, իր գաղափարական և գեղարվեստական աշխարհը կերտել էր՝ ամենայն ուշադրությամբ գտելով այդ ամբողջ ինֆորմացիան: Այս ժամանակաշրջանից «Ալօս»-ի արխիվում պահպանվել են հարյուրավոր հոդվածներ, էսսեներ, հարցազրույցներ ու ճանփորդական նոթեր:

Հրանտ Դինքը միաժամանակ նաև բժշկող էր... Բոլորը, ում հետ առնչվում էր իր կյանքի ընթացքում՝ կին թե տղամարդ, երիտասարդ թե տարեց, գյուղացի թե քաղաքացի, բոլորին կարողանում էր սիրով վերաբերվել ու բոլորի հոգում իր հետքը թողնել: Եվ բոլոր մարդկանց, ում հոգուն դիպել էր, ում կարողացել էր դիպչել, վերափոխել էր: Հետևաբար այս գիրքը պետք է լինեն նաև Հրանտի կյանքի վկաներինը, պետք է հյուսվեր նաև նրանց ձայներից: Բայց նաև չպիտի մոռանայինք, որ սա հուշագրություն չէ, ուստի պիտի բավարարվենք միայն ընտանիքի անդամների և ամենամտերիմների հուշերով:

Սա այն ամենն է, ինչ տեսա ու հասկացա, երբ ընկերների աշակցությամբ սկսեցի խարխափելով առաջ շարժվել Հրանտի կյանքի արահետներով:

Մի բան էլ կար, որ հենց սկզբից գիտեի. դա գլխավորապես ինձ էր վերաբերում: Դա բացատրելը դժվար է, բայց հասկանալը՝ շատ հեշտ: Խոսքը «սահմանները ճանաչելու» անհրաժեշտության մասին է: Ես

Հրանտին կյանքի օրոք էլ ճանաչել էի: Գիտեի, թե նա ինչ հոգի ունի: Տեսել էի նաև այն խավար օրը, որ խլեց նրա հոգին: Տեսել էի թե՛ սեփական աչքով, թե՛ հոգու աչքերով... Եվ այս գիրքը պիտի գրվեր դրա լուսավորող լույսով, դրա գիտակցությամբ: Չպետք է առաջին դեմքով խոսող պատմող լինելի:

Երբ սկսեցի գրքի վրա աշխատել, դեռ չգիտեի, թե իր ընտանիքից բացի ուրիշ ում վկայությունները պիտի ներառեն գրքում, բայց լավ գիտեի, թե ումը չպիտի՝ ներառեն: Նրա հոգին խլողները, դրա համար հող նախապատրաստողները, այդ ամենին գոհունակությամբ հետևողները, լողողները կամ «կոկորդիլոսի արցունքներ» թափողները տեղ չպիտի ունենային գրքում: Հանուն անկողմնակալության՝ ամեն աղբ չէի կարող իմ գիրք խցկել, որովհետև ես էլ կողմերից մեկն էի...

Գիրքս պիտի սկսվեր Հրանտի ծննդով և ավարտվեր հունվարի 19-ով: Իմ պարտականությունը Հրանտի մաս-մաքուր կյանքը գրի առնելն էր: Մնացածը ուրիշների գործն է... Այս նախաձեռնությունը սկսելիս այսքանը գիտեի: Բայց դեռ չգիտեի, թե ինչպիսի օգնություն կարող եմ ստանալ:

Նախ ինձ օգնության հասավ Հրանտի ընտանիքը: Սկզբում՝ որդին՝ Արաթը, հետո՝ եղբայրը՝ Խոսրովը, հետո՝ կինը՝ Ռաքելը, հետո՝ մյուսները... Բոլորը՝ առանց բացառության: Ես ներս մտա նրանց բացած դռնից, մի տարվա ընթացքում անվերջ անցնում էի մի վկայից մյուսին: Ամեն մի նոր վկա ինձ համար մի նոր դուռ էր բացում, ու չնուրորդվելու համար ամեն անգամ ես վերադառնում էի գլխավոր մուտքի մոտ:

Ես դա հավաքման փուլ էի անվանում: Դեռ այդ փուլում, երբ նրա կյանքի պատմությունը նոր-նոր էր սկսում մարմնավորվել, ամբողջանալ, Հրանտն այլևս չդիմացավ: Ոգևորված ձայնով հայտարարեց, թե «Մրանից հետո այս գործն առանց ինձ չի լինի», բռնեց ձեռքս ու իր «Ակօս»-ի խմբագրատուն ուղեկցեց: Այնտեղ իմ առջև իսկական գանձարան բացվեց: Մնդուկը շատ հարուստ էր, մեջը ինչ ասես, որ չկար: Բայց դա խնդիր չէր, որովհետև ես էլ շատ աշխատասեր էի: Անմիջապես գործի անցա, սկսեցի ջոկջոկել, գտնել այն տեքստերը, որոնցում ուղղակիորեն պատմել էր սեփական կյանքի մասին: Նույն կերպ վարվեցի նաև «Yeni Binyıl»¹⁰ և «Birgün»¹¹ թերթերի խմբագրություններում, որտեղ աշխատել էր մինչև կյանքի վերջը:

Հրանտի գրչին ծանոթ մարդիկ գիտեն՝ նրա յուրաքանչյուր գիրը ամուր գաղափարական հիմքի վրա է: Նրա տեքստերը կարծես քարը քարի վրա դրված, միահյուսված կառույց լինեն, որից ոչ միայն մեկ առանձին նախադասություն, նույնիսկ մի պարբերություն մեջբերելը դժվար է: Ավելին՝ նրա խոսքը սրտից է ծնվում և բուռն հոսանքով հորդելիս ընթերցողին զարնացնում է իր անմիջականությամբ: Նրա խոսքը կարծես ոչ թե ամբողջ հասարակությանն է ուղղված, այլ յուրաքանչյուր անհատի՝ առանձին-առանձին: Թվում է՝ նա անմիջականորեն խոսում է հենց քեզ հետ:

¹⁰ «Յենի Բինյըլ», հայերեն բառացի՝ նոր հազարամյակ (ծնր.՝ քարգմանչի):

¹¹ «Բիրգյուն», հայերեն բառացի՝ մի օր (ծնր.՝ քարգմանչի):

Ես առաջին անգամ չէի ծանոթանում Հրանտի գրչին, բայց նման առատության ու ծավալի առաջ, բոլոր իմաստներով, «գարկվեցի»: Ես և՛ նրա խոսքի ուժից ուժ էի ստանում, և՛ խեղդվում էի այդ խոսքին միջամտելու անհրաժեշտության պատճառով, որովհետև գիրքս ընտիր երկերի ժողովածու չէր... Իր աննման առատաձեռնությամբ հանդերձ՝ նա էլ սա պիտի իմանար: Այդ առումով ինձ շատ տանջեց:

Բայց ամեն դեպքում դա Հրանտն էր, իհարկե, որ բոլի մեջ տեղավորվողներից չէր: Երբ նա գիրք մտավ, այն իսկապես իրենով արեց: Ու արդեն ոչ թե վկաները, այլ հենց ինքն էր ուղղություն ցույց տալիս գրքին: Հրանտից Ֆրրաթին, հետո նորից Հրանտին անցումների ժամանակ նա վերափոխվեց, լեզուն ու ոճը լիովին կերպարանափոխվեցին: Ու երբ գիրքը շատ ընդարձակվեց, կիսելու անհրաժեշտություն առաջացավ. առաջին մասը կոչվեց «Խենթ Հրանտ», երկրորդ մասը՝ «Բարոն Հրանտ»...

«Խենթ Հրանտը» ներառում է ծննդից մինչև «Ակօս» թերթի հիմնադրումն ընկած ժամանակահատվածը: Նրա անհատականությունը, որ սկսել էր ձևավորվել մանկատանը, իր խնորման գագաթնակետին է հասնում պատանեկության տարիներին՝ դժվարին կենսական պայքարի ժամանակաշրջանում, ծնունդ տալով խենթ ու խելատ մի երիտասարդի: Մտերիմ ընկերները նրան հայերեն «Խենթ» մականվամբ են կնքել: Այս շրջանում, երբ Հրանտը փոխում է իր անունը՝ դառնալով Ֆրրաթ, միակ անփոփոխ բանը հենց այդ «Խենթ» մականունն էր:

Իսկ «Բարոն Հրանտը» սկսվում է «Ակօս»-ի հիմնադրմամբ և ներառում է նրա ինքնության պայքարի տարիները՝ նախ որպես լրագրող, ապա՝ որպես մտածող, գաղափարախոս: Այս տարիներին նա նորից սկսում է կրել Հրանտ Դինք անունը, իսկ «Ակօս»-ի աշխատակիցները նրան դիմում են «բարոն» դիմելիձևով, որ հայերեն «պարոն» բառն է ու նշանակում է «խոջա, ուստա»: Իսկ «բարոն» տարբերակով այդ բառի արտասանությունը ընդգծում է ոչ միայն անատոլիացի տղամարդկանց բնորոշ հաղթանդամ կազմվածքը, այլ նաև նրա ազնվականությունն ու բարեկիրթ անհատականությունը:

«Խենթ Հրանտ» բաժնի սկզբում տեղ գտած հոդվածները պատմում են գիրքը կազմելիս իմ ունեցած հանդիպումների և հենց գրքի պատմությունը:

Իսկ «Բարոն Հրանտ» բաժնում «Նայել», «Դիպչել», «Տեսնել», «Իմանալ» և «Մեռնել» խորագրերով ներկայացված մասերում սեփական խոսքով չեմ ցանկացել միջամտել Հրանտի մտքի և պայքարի հոսքին, չեմ ցանկացել ընդհատել նրան, ուստի բավարարվել եմ միայն մեկ ներածական խոսքով:

Գալով գրքում տեղ գտած վկայություններին՝ Հրանտին չպատկանող խոսքին, պիտի նշեմ, որ իր գրչով ճշող Հրանտից ավելի շատ այդ վկայություններն են ինձ դժվարություն պատճառել: Երեք տարի շարունակ մեկ առ մեկ գրույցներ են անցկացվել այդ վկաների հետ: Նրանց վկայություններն արձանագրվել են, հետո այդ արձանագրությունները վերլուծվել ու դասակարգվել ժամանակագրական ու թեմատիկ սկզբունքով: Եվ

խոստովանեն՝ գիրքը գրելու փուլում էլ, առանձնահատուկ շեշտադրումներ
րի պահպանմամբ, այդ ամենը վերաշարադրվել է: Վկայությունները
հղումներով կապվել, գրեթե ժապավենի պես միահյուսվել են մեկը մյուսին:
Բայց բովանդակության տեսակետից այդ վկայություններին չի ավելացվել
ոչ մի բառ, որ նրանք չեն ասել: Թեև դա արվել է սահուն տեքստ ստա-
նալու նպատակով, բայց, անպայման, վկայությունների հեղինակներից
թույլտվություն է ստացվել: Տեքստերից մեկ առ մեկ դուրս է բերվել այն ամե-
նը, ինչ վկաները պատմել են սեփական կյանքի մասին, իսկ Հրանտի մասին
պատմված գրեթե ամեն ինչ ջանացել են ներառել գրքում:

Այս աշխատանքների ընթացքում պատահել է, որ երբեմն անձամբ
գրուցելու հնարավորություն չեն ունեցել, նամակագրություն են վարել:
Դրանց մի մասը գրքում տեղ են գտել իմ տված հարցերին իրենց պատաս-
խաններով, մյուսները՝ տարբեր տեքստերից արված քաղվածքներով...
Բայց բոլոր դեպքերում էլ տեքստերը խոսակցական լեզվով ներկայացնելու
կարիք կար:

Թեև միմյանցից շատ տարբեր կարող են թվալ, բայց և՛ «Խեղճ
Հրանտ»-ը, և՛ «Բարոն Հրանտ»-ը այս մոտեցմամբ են գրվել: Երկուսն էլ
դասակարգված են՝ ըստ ժամանակագրության և թեմաների: Դա այնքան
էլ պարզ գործ չէ, որքան կարող է թվալ: Որքան գիրքը ծավալվում էր,
այնքան իմաստային ամբողջականության տեսակետից կարևոր էր դառ-
նում բովանդակային խմբավորումը: Մինչդեռ Հրանտի կյանքում շատ բա-
ներ միաժամանակ էին տեղի ունեցել: Այդ պատճառով էլ ժամանակագ-
րական տեսակետից հետադարձ հայացք նետելն անխուսափելի էր: Մյուս
կողմից՝ գիրքը միայն մասամբ էր գեղարվեստականություն հանդուրժում:
Որոշ ժամանակ անց, նրա կյանքում տեղի ունեցող իրադարձությունների
ճնշմամբ, գիրքը սկսեց մարմնավորվել ու գրեթե կենդանի օրգանիզմի վե-
րածվել, որն ինքն է գծում իր ուղին և մերժում է ամեն տեսակ նախագիծ:
Այդ պատճառով էլ որոշ բաժինների վերնագրեր փոփոխվել են, տեքստե-
րը՝ նորից ու նորից վերաշարադրվել:

Դրա համար էլ այս գիրքը շատ ջանք խլած գեղարվեստական աշ-
խատանք է: Ես իմ պարտքն եմ համարում ասել այդ մասին՝ կանխելու
համար այն թյուր տպավորությունը, որ կարող է ստեղծվել միայն վկա-
յություններից բաղկացած տեքստի ընթերցումից:

Գալով իմ հիմնական պարտքին՝ ուզում եմ նախ սկսել Էթյեն Մահ-
չուփյանից: Հրանտի «կյանքը մտնելու» համարձակությունն ղեռնս «գա-
ղափարի» մակարդակում էր, երբ առաջին անգամ այդ մասին հայտնեցի Էթ-
յենին: Ինձ համար շատ կարևոր է նրա հետ առաջին քաջալերող գրույցը, որ
եղավ Հրանտից հետո նրա գլխավորած «Ակօս»-ի իր աշխատասենյակում:
Էթյենը առաջին ուղին դարձավ դեպի իմ այս գիրքը՝ գաղափարիս մասին
պատմելով Հրանտի ընտանիքին և նրանց համաձայնությունը ստանալով:

Չետո եկավ Դիմք ընտանիքը: Եթե մեկ նախադասությամբ արտա-
հայտվելու կարիք լինի, կասեմ. «Առանց նրանց այս գիրքը չէր կարող լինել»:

Թեև որոշել էին ոչ մեկի հետ շխտել, բայց ինձ վստահեցին, իմ գործին հավատացին ու բացեցին իրենց կողպված սրտերը: Նրանք չեն միջամտել ո՛չ գրքի գրվելու ընթացքում բովանդակության կամ ձևի ընտրությանը, ո՛չ հետագա փոփոխում հրատարակչության կամ հրատարակման ժամանակի ընտրությանը: Իմ գաղափարն էր՝ այնպես անել, որ գիրքը պատրաստ լինի մինչև սեպտեմբերի 15-ը՝ որպես Հրանտի ծննդյան նվեր: Ու մինչ ես անդադար աշխատում էի այդ գաղափարն իրագործելու համար, նրանք իրենց ջերմ խոսքերով ինձ քաջալերում ու ուժ էին տալիս:

Եվ եթե ես կարողացել եմ Հրանտի ոգու պես անկախ աշխատանք ստեղծել, դա միայն նրանց վստահության, հավատի ու նրբանկատության շնորհիվ է:

Հաջորդ անունը, որ պիտի հիշատակեմ, Քարին Քարաքաշլըն է... Հրանտը «Ալօս»-ի իր աջ ձեռքին՝ Քարինին, ինձ մոտ ուղարկեց գրքի վրա աշխատելու երկրորդ տարում: Ու այդ ժամանակ նորից հասկացա, թե ինչպիսի աջակցություն է ինձ տրվում: Քարինը «Ալօս»-ի քայլող գրադարանն է, կենդանի արխիվը ու նաև՝ Հրանտի գաղափարական աշխարհի մեծահոգի երիտասարդ ժառանգը... Այն ժամանակ նա աշխատում էր «Այս սյունակի մարդը» ժողովածուի վրա, որը հետագայում լույս ընծայվեց «Հրանտ Դինք հիմնարկ հրատարակչության» կողմից: Մեր համագործակցությունը սկսվեց, այդ գրքից Հրանտի ինքնակենսագրական հոդվածներն առանձնացնելով, ու հետզհետե ծավալվելով՝ շարունակվեց նաև իմ գրքի շրջանակներում: Նա իր տրամադրության տակ եղած ամեն ինչ ամբողջովին տրամադրեց ինձ: Մի օր իմ աչքերը դառնալով՝ արխիվներն էր քրքրում, մի օր ականջներս դառնալով՝ հարցազրույցների ձայնագրություններն էր վերծանում: Երբեմն իմ ձեռքը դառնալով՝ ժամանակի սղության պատճառով չհասցրածս գործերն էր անում, իսկ երբ աշխատանքից հոգնած սայթաքում էի՝ ոտքերիս պես ինձ կանգուն էր պահում... Գրքիս նկատմամբ նրա խոր հավատի, անվերապահ նվիրվածության ու իմ հանդեպ ցուցաբերած անգուգական հարգանքի ու սիրո համար անսահման երախտապարտ եմ այս երիտասարդ ընկերոջը:

Շնորհակալություններիս ցանկը դեռ շատ երկար է... Այս գրքում տեղ գտած վկայությունների հեղինակներին, ովքեր ժամանակ տրամադրելով՝ ինձ հետ գրուցել են կամ գրավոր շարադրել իրենց հուշերը, իհարկե չեմ կարող մեկ առ մեկ շնորհակալություն հայտնել: Նրանցից ոմանք հին ընկերներս էին, ոմանք՝ նոր ծանոթներ, որոնց մոտ ինձ առաջնորդել էր Հրանտը: Այստեղ ստիպված եմ բավարարվել բոլորին խորին շնորհակալություն ասելով:

Բայց, այնուամենայնիվ, նրանց մեջ կա մեկը, ում կուզենայի առանձին հիշատակել: Թուրքական գրականության անվանի չինարներից Ադալեթ Ադաօղլուն¹², ընթռնումով մոտենալով այն փաստին, որ անձամբ իրեն այցելել չեմ կարողանում, համաձայնեց իր Հրանտի մասին ինձ պատմել

¹² Ադալեթ Ադաօղլու (1929-2020) - բուրբ կին գրող, 20-րդ դարի առաջատար բուրբ վիպասաններից մեկը (ծնթ.՝ թարգմանչի):

հեռախոսով՝ ցուցաբերելով բացառիկ սիրալիրություն ու վստահություն: Լսավողի մեջ հնչող նրա երիտասարդ ձայնը երբեք չեն մոռանա...

Շատ շնորհակալ եմ նաև գրքի վերջում տեղ գտած երգչախմբին. ինձ չմերժելով սեփական ձայնը փոխ տված Բեժան Մատուրին¹³: չին երկրի հին ձայնին՝ երիտասարդ բանաստեղծ ընկերոջս...

Շնորհակալությունների կողքին նաև ներողություն պետք է խնդրեն: Ներողություն՝ այն վկայությունների հեղինակներին, որոնք չեն ներառվել գրքում... Հրանտի հսկա սրտում տեղավորվող նրա բոլոր ընկերներին գրքում ներառել հնարավոր չէր: Անխուսափելիորեն պիտի կրճատումներ լինեին, և ստիպված էի բավարարվել ամենամտերիմների շրջանակով: Եթե այդպես անելով՝ սխալվել եմ, ներեցեք ինձ...

Գրքի պատմության մասին ասելիքս այսքանն է: Բայց կար նաև գրքի՝ հրատարակման պատրաստելու փուլը. այնտեղի ողջ անձնակազմին էլ շնորհակալություն եմ հայտնում:

Դեռ գիրքը գրելու փուլում նախ ինձ աջակցեցին «Ալօս»-ում, որտեղ Յելիզ Բըրըչալանը զբաղվեց ձայնագրությունների վերձանմամբ: Ապա աջակցությունը շարունակվեց հետագա փուլերում՝ ռեժիսոր Լեդա Մերմերի օգնությամբ, և ավարտվեց թերթի երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, գլխավոր խմբագիր Ռոբեր Քոփաշի եզրափակիչ ստուգողական ընթերցանությամբ՝ նախքան գիրքը կհանձնվեր «Everest Yayınları»¹⁴ հրատարակչությանը: Հրանտ Դինք հիմնարկից տիկին Ջեյնեփ Թաշքընը, որ գերծանրաբեռնված էր գործերով, ինչպես նաև մյուս բոլոր աշխատակիցները մշտապես չափազանց սիրալիր ու պատրաստական աջակցություն են ցուցաբերել ինձ:

Իսկ «Արաս»¹⁵ հրատարակչությունը վերջին պահին սեփական նախաձեռնությամբ իր վրա վերցրեց ծանոթագրությունների բաժնի աշխատանքները՝ այդպիսով շտապօգնության բրիգադի դեր ստանձնելով:

Այստեղ չեմ կարող նաև խորին երախտագիտությամբ չիիշատակել իմ նոր հրատարակչության՝ «Everest»-ի տնօրեն, իմ սիրելի Սըրնա Քյոքսալին, [բնագրի] խմբագիր Էմրե Թայլանին, շապիկի ձևավորող Ութքու Լոնլուին, որոնք իմ բոլոր ցանկություններին ջերմորեն ընդառաջել են:

Գուցե ինչպես միշտ՝ ամենավերջի համար եմ թողել այն, ինչը հենց սկզբում պիտի ասեի: Ընտանեկան ջերմ աջակցության համար շնորհակալ եմ ամուսնուս՝ Ջենգիզ Չանդարին, որը եռամյա գերլարված աշխատանքիս ընթացքում համբերատար հանդուրժեց իմ անտանելի պահվածքը,

13 Բեժան Մատուր (ծնվ. 1968) - ժամանակակից թուրք կին գրող, բանաստեղծուհի (ծնթ.՝ քարգմանչի):

14 «Էվերեստ» հրատարակչություն, գրքի թուրքերեն բնագիրը տպագրվել է այս հրատարակչության կողմից (ծնթ.՝ քարգմանչի):

15 «Արաս» հրատարակչությունը (թուրք.՝ Aras Yayınları) հիմնվել է 1993 թ. Ստամբուլում՝ անվանի պոլիտեսայ մտավորականներ Մկրտիչ Մարկոսյանի, Արուշես Մարկոսյանի, Եղվարդ Թումասյանի և Հրանտ Դինքի կողմից: Հրատարակչությունը լույս է ընծայում հայերեն, քրդերեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն գրքեր, որոնց առանցքում առավելապես հայ մշակույթն ու գրականությունն են (ծնթ.՝ քարգմանչի):

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ

Հրանտ Դինք հիմնարկը ստեղծվել է 2007 թվականի մեծ ողբերգությունից հետո՝ նման դեպքերը կանխարգելելու, Հրանտ Դինքի՝ ավելի արդար ու ազատ աշխարհ կերտելուն միտված երագանքները իրականացնելու, նրա խոսքը և ոգին ապրեցնելու համար: Հիմնարկի հիմնարար սկզբունքը ժողովրդավարության և մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանությունն է՝ անկախ էթնիկական, կրոնական, մշակութային և գենդերային տարբերություններից:

Հիմնարկը ձգտում է այնպիսի հասարակարգի կերտմանը, որտեղ մարդն ունի ազատ խոսքի իրավունք, որտեղ գոյատևում և խթանվում, պահպանվում և զարգացվում են բոլոր տարբերությունները: Հիմնարկը գործում է հանուն այնպիսի աշխարհի և այնպիսի Քուրբխայի, որտեղ ոչ թե հողը, այլ մարդն է արժեք, որտեղ անցյալին և ներկային նայելիս առաջնայինը խիղճն է: Որպես Հրանտ Դինք հիմնարկ՝ «դատը, հանուն որի ապրում ենք», այնպիսի ապագա է խոստանում, որտեղ գերակշռում են երկխոսությունը, համերաշխությունն ու ապրումակցումը:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 